խել)	200
19. Գեոկչայի գաւառում	5000
20. Խալիսալում և շրջակայք	1000
21 Ղում գիւղում և շրջակայք	446
22. Մալբղ գիւղում և շրջակայք	111
23. Թալա և շրջակ.	200
24. Բաշ գեօնուկում	652
25. Քիւքեալ և շրջ.	200
26. Արաշ և շրջակ.	504
27. Ղարալայ և շրջ.	250
28. Մարսան, Ջոռոլու և Գեօրաղլար գիւղերում	218
29. Աղջա-ղալայ և իւր շրջակայ գիւղերում։	311
Ընդամենը	15480

Բազմապատկելով 15480×5-ով=77400 հոգու *)։ Տարաբախտաբար մենք՝ Հայերս մեր անցեալ պատմութիւնը լաւ չգիտենք։ Մեր ազգը, մեր ցիր ու ցան Հայ ժողովուրդը, նոյն իսկ մի թեթև գաղափար անգամ չունի իւր ցեղական առանձնայատկութիւնների, իւր պապերի ու նախնիքների ծագման, նրանց բնակած երկրների և նրանց կրած դառն հալածանքների ու դժբախտութեանց մասին։ Մի որևէ ազգ կամ ժողովուրդ, որ իւր պապերի ու նախնիքների կրօնի ու լեզուի, նրանց վարք ու բարքի և նրանց կատարած լաւ և վատ գործերի հետ անծանօթ է, այնպիսի ազգ և այնպիսի ժողովուրդ կորած է գլխովին.

*) Թէև գեր. Մ. եպ. Բարխուդարեանը՝ իւր «Աղուանից երկեր» գրքի 292 երեսում, Հայից մահմեդական դարձած ծխերի թիւը հաշուում է 15480 կամ 77400 հոգի, բայց ինձ թւում է, որ այս բոպէիս թրքացած Հայերի թիւը անշուշտ կլինի 100 հազար հոգի։